ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

10. 02. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 14-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի (առանց լուծարքային շրջանի) արդյունքների ամփոփում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրման և հաստատման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների ամփոփում (զեկուցողներ՝ **Վ. Ավագյան, Լ. Թումանյան**):
4. Ընթացիկ հարց.
   - Ֆակուլտետի ամբիոններում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական ծրագրերի և փաթեթների առկայության մասին (զեկուցողներ՝ **ամբիոնների վարիչներ**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին ֆակուլտետի դեկանի պաշտանակատար Կ. Պողոսյանը նշեց, որ 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը (առանց լուծարքային շրջանի) իրականացվել է 2023 թ. հունվարի 4-24-ն ընկած ժամանակահատվածում՝ ըստ հաստատված ժամանակացույցների: Քննաշրջանն անցկացվել է պատշաճ կարգով. խախտումներ և բողոքարկումներ չեն արձանագրվել:

Քննաշրջանի արդյունքների համաձայն՝ առանց առարկայական պարտքի են ավարտել «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 2-րդ, «Հոգեբանություն» 4-րդ, «Ռուսաց լեզու և գրականություն» 1-ին և 4-րդ կուրսերը:

«Պատմություն» 2-րդ և 3-րդ, «Հայոց լեզու և գրականություն» 3-րդ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 4-րդ և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» 1-4-րդ կուրսերում առարկայական պարտքեր ունեն մեկական ուսանողներ:

Ուսանողների քանակով ամենաշատ առարկայական պարտքեր ունեցող կուրսը (13 ուսանող) «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսն է:

Քննաշրջանի արդյունքների համաձայն՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների առաջադիմությունը կազմում է 80.3 %:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի (առանց լուծարքային շրջանի) արդյունքների ամփոփման մասին Կ.Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ևս զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը և նշեց, որ Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի համաձայն՝ տրվող անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել 4 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն ունեցող ուսանողները: Կ. Պողոսյանը նշեց, որ ըստ կրթական ծրագրերի հատկացված անվանական կրթաթոշակները ֆակուլտետում 4-ն են՝ «Մխիթար Գոշ» (Պատմություն), «Դավիթ Անհաղթ» («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն»), «Գրիգոր Նարեկացի» («Հայոց լեզու և գրականություն»), «Շառլ Ազնավուր» («Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն»):

Անդրադառնալով նշված կրթաթոշակների հավակնորդների թեկնածություններին՝ զեկուցողը նշեց, որ «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Պատմություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Կարենի Մարգարյանի թեկնածությունը, ով ունի չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական

ակտիվություն:

«Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Վարուժանի Վասիլյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Արթուրի Ստեփանյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսյա Արամի Շախպարյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Այնուհետև ներկայացվեցին մասնաճյուղում մրցութային կարգով տրվող 4 անվանական կրթաթոշակների համար («ԵՊՀ», «Իջևան», «Արտակ Ցուցուլյան», Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակ) ֆակուլտետի կողմից առաջադրվող թեկնածուները:

Նշվեց, որ «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Գրիգորի Դավթյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Իջևան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Նարա Արմենի Մելքումյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Խաժակի Սարդարյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Արտավազդի Եղոյանի թեկնածությունը, ով ունի հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն.Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի մասին զեկուցողներ Լ. Թումանյանը և Վ. Ավագյանը նշեցին, որ կրթական ծրագրերի մշտադիտարկումը որակի ապահովման բուհական գործընթաց է, որով հավաստվում է ուսումնառության և դասավանդման գործընթացների կազմակերպման, ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովման, ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համապատասխանությունը իրականացվող ծրագրերի խնդիրներին:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի մոնիթորինգի խումբը, ամփոփելով կատարած աշխատանքի արդյունքները, եզրահանգել է.

1. Ծրագրի ուսանողները հետաքրքրված են ներառված դասընթացներով՝ ընդգծելով, որ դրանք օգտակար են և հնարավորություն են տալիս ստացած

գիտելիքները և ձեռք բերած մասնագիտական կարողությունները կիրառել գործնականում:

2. Հետազոտական աշխատանքների արդյունքները և դասախոսների արձագանքները վկայում են, որ ուսանողները կարողանում են ինքնուրույն աշխատել և առաջադրված խնդիրների համար լուծումներ գտնել, որ նրանք ունեն հետազոտական աշխատանք կատարելու անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ:
3. Ծրագրի վերջին տարիների շրջանավարտները նշում են, որ բավարարված են մասնաճյուղում ստացած կրթությունից, որ նրանց մեծ մասը ձեռք է բերել կրթական ծրագրում ամրագրված մասնագիտական կարողություններ և հմտություններ:
4. Ամփոփիչ ատեստավորման նախագահները նշում են, որ ուսանողների ավարտական աշխատանքները ուշագրավ են իրենց թեմատիկայով, առաջադրված խնդիրների թարմ մեկնաբանություններով, արդիական հնչեղությամբ:
5. Մարզի տարբեր բնագավառների գործատուները ընդհանուր առմամբ բավարարված են ծրագրի շրջանավարտների մասնագիտական կարողություններից:

Հաշվի առնելով և արժանավույնս գնահատելով վերոնշյալ փաստերը՝ մոնիթորինգի խումբը կարծում է, որ «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը մարզում նկատելի պահանջարկ ունի, միտված է ապահովելու մարզը որակյալ կադրերով և անմնացորդ իրականացնում է իր հայապահպան ու լեզվափրկիչ դերը, հայ ազգային դարավոր մշակույթն ու նրա ստեղծած հոգևոր գանձերը ժողովրդին վերադարձնելու, նրա սեփականությունը դարձնելու իր մեծագույն առաքելությունը:

ՈՐՈՇԵՅԻՆ.

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների ամփոփման մասին զեկուցողներ Լ. Թումանյանի և Վ. Ավագյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՅԻՆ.

Ընթացիկ հարցի մասին զեկուցեցին ամբիոնի վարիչները և նշեցին, որ

ամբիոններում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական ծրագրերը և փաթեթները հիմնականում առկա են. որոշները վերանայման ընթացքի մեջ են և սեղմ ժամկետներում կներկայացվեն վերջնական տեսքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը: Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց հետևողական լինել նոր ուսումնական կիսամյակի սկզբում ամբիոններում առարկայական բոլոր ծրագրերի և փաթեթների առկայությանը, դրանց վերանայման գործընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական ծրագրերի և փաթեթների վիճակը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան